ՆԱԽԱԳԻԾ
ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Պ-325-01.06.2018-ԱՍ-011/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 226-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.

«Հոդված 226. Կարգապահական տույժի կիրառման կարգը

Մինչև կարգապահական տույժի կիրառման գործատուն պետք է աշխատողից գրավոր կերպով պահանջի խախտման մասին գրավոր բացատրություն: Եթե գործատուի սահմանած ողջամիտ ժամկետում աշխատողն առանց հարգելի պատճառների չի ներկայացնում գրավոր բացատրություն, ապա կարգապահական տույժը կարող է կիրառվել առանց գրավոր բացատրության»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Երկրորդ ընթերցման ժամանակ փոփոխվող հոդվածների մասին տեղեկանք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ~~ԼՐԱՑՈՒՄ~~ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության ~~2004 թվականի նոյեմբերի 9-ի~~ աշխատանքային օրենսգրքի 226-րդ հոդվածը շարադրել ~~հետևյալ~~ նոր խմբագրությամբ.

«Հոդված 226. Կարգապահական տույժի կիրառման կարգը

Մինչև կարգապահական տույժի կիրառման գործատուն պետք է աշխատողից գրավոր կերպով պահանջի խախտման մասին գրավոր բացատրություն: Եթե գործատուի սահմանած ողջամիտ ժամկետում աշխատողն առանց հարգելի պատճառների չի ներկայացնում գրավոր բացատրություն, ապա կարգապահական տույժը կարող է կիրառվել առանց գրավոր բացատրության»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական ~~հրապարակմանը~~ հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: